

ՍԱՂՄՈՍ 118

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

| NASB | NKJV | NRSV | TEV | NJB |
|--|---|--|---------------------------------|---|
| Գոհություն ՏԻՐՈՋ փրկող բարության համար | Փառք Աստծուն Իր հավիտենական ողորմության համար | Պատերազմում փրկության համար գոհություն | Հաղթանակի համար գոհության աղոթք | Վրասների տոնի երթի օրհներգ |
| <u>MT ներածություն</u> <u>չկա</u> | | | | |
| 118:1-4 | 118:1 118:2-4 | 118:1 118:2-4 | 118:1-4 | 118:1 118:2-4 |
| 118:5-9 | 118:5-9 | 118:5-9 | 118:5-9 | 118:5-7 118:8-9 |
| 118:10-14 | 118:10-14 | 118:10-14 | 118:10-12 118:13-14 | 118:10-12 118:13-14 |
| 118:15-18 | 118:15-18 | 118:15-18 | 118:15-16 118:17-18 | 118:15-16 118:17-18 |
| 118:19-21 | 118:19-20 118:21 | 118:19 118:20-25 | 118:19 118:21 | 118:19-21 |
| 118:22-29 | 118:22-24 118:25-28 | 118:26-27 118:28 | 118:22-25 118:28 | 118:22-24 118:25-27բ 118:27գ-28 |
| | 118:29 | 118:29 | 118:29 | 118:29 |

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը հակահնչունային պրոֆեսիոնալ Սաղմոս է (տես՝ Սաղմ. 118:1 և 2-4): Գոյություն ունեն մի քանի տարբեր խմբեր, որոնք կարծես թե պատասխանում են մեկը մյուսին: Սա բացատրում է՝

1. կրկնվող բնույթը
2. այս Սաղմոսում ներգրավված տարբեր թեմաները

Բ. Այս Սաղմոսի ստույգ պատմական միջավայրը վիճելի է: Ակնհայտ է, որ Կարմիր Ծովի մոտ Մովսեսի հաղթական երգն է (այսինքն՝ Ելից 15) այս նկարագրության պատմական աղբյուրը: Սակայն ստույգ տարեթիվը չէր կարող համապատասխանել հետզերության վերադարձի շրջանի հետ՝ Նեեմիայի առաջնորդությամբ (JPSOA) կամ էսկատոլոգիական միջավայրը, որն այս Սաղմոսը կդարձնե կիրառելի յուրաքանչյուր սերնդի նեղությունների և խնդիրների համար:

Գ. Այս Սաղմոսը պատմության մեջ համընկնում է Չատկի տոնի հետ: Սա Հալլել Սաղմոսներից վերջինն է՝ Սաղմոս 113-118: Հիսուսը մեջբերում է այս Սաղմոսից Երուսաղեմ Հաղթական Մուտքի ժամանակ (տես՝ Մատթ. 21:42, Մարկ. 12:10,11, Դուկ. 20:17): Այս Սաղմոսը բավականին հաճախ է կիրառվում ՆԿ-ում՝ Քրիստոսի գործի մեկնության համար (տես՝ Գործք 4:11, Հռոմ. 9:32,33, Եփես. 2:20, 1 Գեա. 2:7):

Դ. Հրեական Միդրաշը մեկնում են այս Սաղմոսը Մեսիական նշանակությամբ: Սա մասնավորապես կարող է երևալ Սաղմ. 118:22 և 26-ի ՆԿ-յան կիրառությունների և մեկնությունների մեջ (տես՝ Մատթ. 21:9, 23:39, Մարկ. 11:9, Դուկ. 13:35, 19:38, Հովհ. 12:13):

Ե. Այս Սաղմոսը բնութագրում է մի ազգի փորձառությունը յուրահատուկ անհատի՝ սկզբնապես Իսրայելի թագավորին վերաբերող տերմիններով, սակայն հետագայում այն դարձավ այն կատարյալ կերպարը, որը հայտնի է որպես Մեսիա՝ Օծյալ: Այս իմաստով, որպես կատարյալ իսրայելացի, Նա իրականացնում է ոչ միայն այս հատվածը, այլ նաև Եսայի 53-ը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 118:1-4

¹Գոհություն մատուցեք ՏԻՐՈՉԸ, քանի որ բարի է.

Քանի որ Նրա ողորմությունը հավիտյան է:

²Իսրայելը թող ասի. «Նրա ողորմությունը հավիտյան է»:

³Ահարոնի տունը թող ասի. «Նրա ողորմությունը հավիտյան է»:

⁴ՏԻՐՈՉԻՑ վախեցողները թող ասեն. «Նրա ողորմությունը հավիտյան է»:

118:1 «Գոհություն մատուցեք» Այս Սաղմոսը սկսում և ավարտվում է փառաբանությամբ («գոհություն մատուցեք», BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿՆ): Այս Սաղմոսի համար լավ վերնագիր կարող էր լինել «Գոհության Տոնակատարություն»:

Ինչ վերաբերում է այս Սաղմոսի անձնական կիրառությանը ամենօրյա կյանքում, այն չափազանց կարևոր է թվարկելու Իր ժողովրդին Աստծո կողմից ուղարկված օրհնությունները՝ թե՛ պատմական և թե՛ գոյաբանական:

❖ «ՏԵՐԸ» Սա Աստծո նւխտի անունն է՝ ՅԱՀՎԵ, եբրայերենի «լինել» ԲԱՅԻՑ (տես՝ Ելից 3:14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ «Նա բարի է» Հանախ, երբ մարդ կարդում է ՀԿ-ը, զարմանում է Աստծո բնավորության վրա (այսինքն՝ սուրբ պատերազմ, ելից, գերություններ): Այս Սաղմոսը վերահաստատում է մեզ արարիչ Աստծո հիմնական բնավորությունը (տես՝ 1 Մնաց. 16:34, Սաղմ. 25:8, 34:8, 73:1, 86:5, 100:5, 106:1, 107:1, 118:1,29, 119:68, 135:3, 136:1, 145:9, Երեմ. 33:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

❖ «Քանի որ Նրա ողորմությունը հավիտյան է» Սա ցույց է տալիս Աստծո ողորմությունն ու հավատարմությունը, որ միայն Իր բնավորության մեջ, այլ նաև Իր ստեղծագործության և փրկագործության մեջ (տես՝ Ելից 34:6, Նեեմիա 145:9, Երեմ. 33:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (hesed)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)

118:2 «Իսրայելը թող ափ» «Ասել» (BDB 55, KB 65, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ) կրկնվում է երեք անգամ: Սաղմոս 118:2-4 ցույց է տալիս երեք տարբեր խմբեր Իսրայելի ներսում, ովքեր կանչված են ՏԻՐՈՋԸ փառաբանելու: Այս երեք խմբերին նաև կարելի է տեսնել Սաղմ. 115:9-13-ում: Հերթականությունը կարծես թե այսպիսին է՝

1. ազգը
2. քահանաները
3. Տիրոջից վախեցողները (Հրեական Սերտողության Աստվածաշունչը, էջ՝ 1414, առաջարկում է «նորադարձները», սակայն Սաղմոս 15 նկատի է ունենում աստվածավախ իսրայելացիներին):

Նրանք պետք է փառաբանեն Աստծուն Իր ուխտի հավատարմության համար:

118:4 «վախենալ/վախեցող» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՎԱԽ (ՀԿ)

| |
|--|
| <p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 118:5-9</p> <p>⁵Նեղության մեջ ՏԻՐՈՋԸ կանչեցի, ՏԵՐԸ պատասխան տվեց ինձ՝ Մի լայնարձակ տեղ <i>հանելով</i>:</p> <p>⁶ՏԵՐՆ իմ կողմն է, ես չեմ վախենա, Մարդն ինձ ի՞նչ կարող է անել:</p> <p>⁷ՏԵՐՆ իմ օգնականների հետ իմ կողմն է, Ու ես ինձ ատողների վրա կնայեմ:</p> <p>⁸Լավ է ՏԻՐՈՋԸ հուսալ, քան թե մարդկանց ապավինել:</p> <p>⁹Լավ է ՏԻՐՈՋԸ հուսալ, քան իշխաններին ապավինել:</p> |
|--|

118:5 «Նեղության մեջ ՏԻՐՈՋԸ կանչեցի» Ակնհայտ է, որ հեղինակի գոյաբանական միջավայրը ճնշումների, հալածանքի կամ խնդրի ինչ-որ տեսակ է: Կարծես թե երկրպագության այս առաջնորդը՝ լինի դա թագավորը, թե ազգը, որը անձնավորված է Մեսիայի մեջ, պատրաստվում է խնդիրներով անցնել:

«Նեղություն» տերմինը (BDB 865) հազվադեպ ձև է, որը կարելի է գտնել միայն այստեղ ԵԶԱԿԻ թվով: Այն ՀՈԳՆԱԿԻ թվով առկա է նաև Ողբ 1:3-ում և որպես ԲԱՂԱԴԻՅԱԼ՝ Սաղմ. 116:3-ում: (որտեղ NASB թարգմանում է այն որպես «Շեղի վախերը/ցավերը»):

❖ **«ՏԵՐԸ պատասխան տվեց ինձ՝ մի լայնարձակ տեղ հասնելով»** Սա հրաշալի հաստատում է այն բանի, որ Աստված միշտ լսում է և պատասխանում հավատարիմ հետևորդների օգնության կանչին (տես՝ Սաղմ. 118:21, 17:6, 31:2, 34:15, 40:1, 69:17, 71:21, 86:1, 102:2): «Նեղության» համար երբայերեն տերմինը (BDB 865) նշանակում է «ճնշել կամ պատճառ հանդիսանալ, որ ինչ-որ մեկը լինի ճնշման տակ», մինչդեռ «լայնարձակ տեղ հանել» նկարագրությունը (BDB 932) խոսում է ինչ-որ մեկին ճնշումներից հանելու և նրանց լայնարձակ դաշտավայրում արձակելու մասին (տես՝ Սաղմ. 4:1, 18:19, 31:8): Ոմանք կարծում են, որ այն վերաբերում է երկնքին (AB, էջ՝ 156), սակայն համատեքստում այն պարզապես նշանակում է ազատություն ֆիզիկական խնդրից կամ կարիքից:

118:6 «ՏԵՐՆ իմ կողմն է, ես չեմ վախենա, մարդն ինձ ի՞նչ կարող է անել» Ինչպիսի՛ հզոր հաստատում այն բանի, որ Աստված մեր կողմից է (տես՝ Սաղմ. 16:8, 23:4, Եսայի 43:1-2): Եվ եթե Աստված մեր կողմն է, հաղթանակը երաշխավորված է (տես՝ Սաղմ. 56:4,11): Աստծո ներկայությունը ամենամեծ օրհնությունն է:

❖ **«մարդն ինձ ի՞նչ կարող է անել»** Սա հավատարիմ հետևորդի հավատքի եզրահանգում է, որը Սուրբ Գրքի միջոցով և փորձառությամբ գիտի ՏԻՐՈՋ ներկությունը, հոգատարությունը, մատակարարումը և պաշտպանությունը (տես՝ Սաղմ. 56:4,11, 146:3, Եբրայեցիների 13:6):

118:7 «ՏԵՐՆ իմ օգնականների հետ իմ կողմն է» Եբրայերեն այս դարձվածքը նշանակում է «ՏԵՐԸ մեր ռազմական հաղթանակողն է» (տես՝ Սաղմ. 54:4): Աստծո գաղափարը որպես պատերազմող (տես՝ Ես. 59:17, Եփես. 6:10-12) կարևոր է նրանց համար, ովքեր անարդարացի կերպով հալածանքներ են կրում Նրա Անվան համար:

❖ **«Ու ես ինձ ատողների վրա կնայեմ»** «Ինձ ատողները», ովքեր սաղմոսերգուին «նեղություն» են պատճառում Սաղմ. 118:5-ում, շրջապատել են նրան Սաղմ. 118:10-13-ում:

Աստծո դատաստանը թե՛ էսկատոլոգիական է և թե՛ ժամանակավոր: Սաղմոսները հաճախ խոսում են վրեժխնդրության և արդարության մասին այս կյանքում (տես՝ Սաղմ. 23:5, 37:34, 52:5-6, 54:7, 58:10, 59:10, 91:8, 92:11, 112:8):

118:8-9 «Լավ է ՏԻՐՈՋԸ հուսալ, քան թե մարդկանց ապավինել» Սա ժամանակավոր օգնության հպանցիկության, սակայն փրկիչ Աստծո ուրախության և գործության հավերժության հաստատություն է (տես՝ 2 Մնաց. 32:7-8, Սաղմ. 108:12, 146:3, Եսայի 2:22, 30:1-3, 31:1-3, Երեմ. 17:5-8):

AB (էջ՝ 157) հաստատում է, որ «մարդը» (ադամ, BDB 9) Սաղմ. 118:8-ում զուգահեռ է «իշխաններին» (BDB 622, հ. 9բ) և որ դրանք դարձվածքներ են «բոլոր մարդկանց» համար (այսինքն՝ Սաղմ. 146:3):

Ուշադրություն դարձրեք չորս *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴԻՅԱԼՆԵՐԻ կիրառությանը՝

1. ապաստան փնտրել/ապավինել – BDB 340, KB 337 (երկու անգամ)
2. վստահել – BDB 105, KB 120 (երկու անգամ)

118:8 «ապաստան» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՍԱՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 118:10-14

¹⁰Բոլոր ազգերն ինձ պաշարեցին .

Բայց ՏԻՐՈՋ անունով կործանելու եմ նրանց:

¹¹Իմ շուրջբոլորը հավարվեցին, այո՛,

Ինձ շրջապատեցին, բայց ՏԻՐՈՋ անունով

կործանելու եմ նրանց:

¹²Մեղուների պես շուրջբոլորս հավարվեցին,

Բայց փշերի կրակի պես հանգան,

Քանի որ ՏԻՐՈՉ անունով կործանելու են նրանց:

¹³Ուժգին հրեցին ինձ, որպեսզի ցած ընկնեմ,

Բայց ՏԵՐՆ օգնեց ինձ:

¹⁴ՏԵՐՆ իմ գորությունն ու իմ երգն է

Ու իմ փրկությունը եղավ:

118:10-12 «Բոլոր ազգերը ինձ պաշարեցին» Այս արտահայտությունը մի քանի տարբեր կերպերով է թարգմանվել:

1. Այս Սաղմոսում և շատ այլ սուրբգրային համարներում առկա բազմաթիվ ակնարկների պատճառով որոշ մեկնաբաններ սա դիտարկում են որպես ելիցի շրջանը նկատի ունեցող հասված:
2. Շատ մեկնաբաններ ենթադրում են, որ անհատական առանձնահատկությունները ավելի լավ են համապատասխանում հետ-գերության շրջանին՝ Երուսաղեմի պարիսպները վերակառուցելու շրջանի հետ:
3. Մյուսները ենթադրում են, որ սա վերաբերում է էսկատոլոգիական համատեքստին, որտեղ այս աշխարհի թագավորությունները կանգնում են Աստծո և Նրա Քրիստոսի թագավորության դեմ (տես՝ Սաղմ. 2:2, Չաք. 14:2, Հայտ. 19:11-21):

❖ **«ՏԻՐՈՉ անունով կործանելու/կտրելու են նրանց»** «Կործանելու/կտրելու» (BDB 557, KB 55, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) բառացի երբայերեն արտահայտություն է, որը գործածվում էր թլփատության համար: Այս Սաղմոսի Մեսիական ենթատեքստի պատճառով, ոմանք սա դիտարկում են որպես հեթանոս ազգերի երկխոսություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Սակայն համատեքստում կարծես թե նրանց կործանման մասին է, ոչ թե փրկության:

«Ես» և «ինձ» բառերի պարբերաբար կրկնվող կիրառությունը Սաղմ. 118:10-13-ում ենթադրում է, որ հեղինակը թագավորն է: «Պաշարեցին նրան» հնարավոր է մատնանշում է Երուսաղեմի պաշարումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

118:12 Այս երկու պատկերները կարծես թե նկատի ունեն Աստծո ժողովրդի պաշարումը Աստծուն հակառակ մարդկանց, աշխարհի ուժերի կողմից, և նրանց կատարյալ և հանկարծակի կործանումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ

❖ **«մեղուների պես»** Սա հավանաբար առնչվում է Ելիցի, Նվաճման հետ, տես՝ 2 Օրինաց 1:44:

❖

NASB, JPSOA
NKJV, Peshitta
NRSV, LXX
REB
NJB
NET

«մարեցին»
«հանգեցին»
«այրվեցին»
«հարձակվեցին»
«բռնկվեցին»
«անմիջապես անհետացան»

MT տալիս է «մարեցին» (BDB 200, KB 228, *Pual* ՎԱԴԱԿԱՏԱՐ, սակայն «վառվեցին» (BDB 129) ավելի լավ է համապատասխանում համատեքստին: Այնուհանդերձ NET տարբերակը ԲԱՅԻ նշանակության՝ մտադրության համար դինամիկ թարգմանություն է: UBS Տեքստային Նախագիծը՝ էջ 405, գնահատում է է «B»:

1. մարեցին – 17ע7
2. վառվեցին – 17עב

❖ «**փշերի կրակի պես**» Փշոտ թփերը այրվում են արագ և հարմար չեն տաքացնելու կամ կերակուր պատրաստելու համար:

❖ «**ՏԻՐՈՋ անունով . . .**» Սա ենթադրում է Դավթի սերնդից թագավորին՝ Հիսուսին:

118:13 «ուժգին հրեցին ինձ» Այս արտահայտությունը ավելի ուժեղ է շեշտադրվում եբրայերենում նույն արմատի *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴՐՅԱԼԻ և *Qal* ԲԱՅԻ կիրառության շնորհիվ (BDB 190, KB 218):

AB (Էջ՝ 158) այս գործողությունը դիտարկում է որպես մահվան համար կիրառվող դարձվածք, հիմնված «սայթաքելու» հասկացության վրա (տես՝ Սաղմ.35:6, 36:12, 56:13, 116:8, նաև ուշադրություն դարձրե՛ք՝ NIDOTTE , հատոր 1, էջ՝ 933):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

118:14 «ՏԵՐՆ իմ գորությունն ու իմ երգն է ու իմ փրկությունը եղավ» Սաղմոս 118:14 և 15 արտացոլում են հաղթության այն երգը, որը երգվեց Կարմիր Ծովը կտրել անցնելուց հետո (տես՝ Ելից 15:2ա), նույն մեջբերումը գտնվում է Եսայի 12:2-ում:

«Չորություն» բառի համար տես՝ Ելից 15:2, Սաղմ.28:8, 46:1, 59:17, 81:1, Եսայի 12:2բ: Սա հաճախ կիրառվում է ռազմական իմաստով, ինչպես «փրկություն, ազատություն» բառերը:

«Փրկություն» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆԸ)



**NASB, NKJV, NJB, Peshitta
NRSV, JPSOA
REB
TEV
LXX**

«երգ»
«ուժ»
«պաշտպանություն»
«ուժեղ»
«տոնակատարություն»

MT տալիս է «երգ» (BDB 274), բայց KB 274 թվարկում է արմատի համար երկու նշանակություն՝

1. մեղեդի – KB 274 I, տես՝ Սաղմ. 81:2, 98:5
2. գորություն – KB 274 II, կապված Ելից 15:2-ում «գորության» հետ, որտեղ «երգ» բառի համար օգտագործվում է մեկ այլ բառ (BDB 1010). նաև տես «գորություն» և այս բառի կիրառությունը միասին Եսայի 12:2-ում:

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 118:15-18

¹⁵Արդարների բնակարաններում ցնծության ու փրկության ձայն կա .

ՏԻՐՈՋ աջ ձեռքը գորությամբ է գործում:

¹⁶**ՏԻՐՈՋ աջ ձեռքը բարձրացած է:**

ՏԻՐՈՋ աջը գորությամբ է գործում:

¹⁷Չեմ մեռնելու, այլ ապրելու եմ, որ **ՏԻՐՈՋ** գործերը պատմեմ:

¹⁸**ՏԵՐՆ ինձ շատ է խրատել, բայց մահվան չի մատնել ինձ:**

118:15 «Ցնծության ձայն» Տես՝ Ելից 15:6,12:

❖ «**արդարների բնակարաններում/վրաններում**» Սա պատմական ակնարկ է (կամ մեռած փոխաբերություն) անապատի դեզերման շրջանին վերաբերող, որը մշտապես իդեալականացվել է Իսրայելի ավանդույթներում որպես ՅԱՀՎԵԻ և Իր ժողովրդի միջև եղած սրահ:

118:15-16 «ՏԻՐՈՋ աջ ձեռքը» Այս երեք անգամ կրկնվող արտահայտությունը շեշտադրում է մարդաբանական տերմիններով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՍԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՍՈՐՖԻԶՄ))՝ Աստծո գորությունը, ներկայությունը, պատրաստակամությունը գործելու Իր ժողովրդի համար թե՛ ժամանակի, և թե՛ հավիտենության մեջ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՉԵՌՔ:

«Ձախ ձեռք» տերմինը մատնանշում է թուլություն և երբեք չի կիրառվում Աստծո գործունեության համար:

118:17 «Չեմ մեռնելու, այլ ապրելու եմ» Սա հնարավոր է շեշտադրում է ազգի գոյատևումը, սակայն կիրառված է անհատական իմաստով:

❖ **«որ ՏԻՐՈՋ գործերը պատմեմ»** Սա նկատի ունի բառացի փառաբանություն տաճարի մեջ (տես՝ Սաղմ. 9:14): Սա մի կերպ էր, որով արտահայտում էին՝

1. ՅԱՀՎԵԻ մասին աստվածաբանություն (տես՝ Ելից 9:16, Սաղմ. 96:1-6)

2. ՅԱՀՎԵԻ վրա անձնական վստահություն (տես՝ Ելից 10:2)

ԲԱՅԸ (BDB 707, KB 765, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) մատնանշում է ՅԱՀՎԵԻ փրկագործությունների վերահաշվարկ (տես՝ Սաղմ. 40:5, 73:28, 78:3,4, 79:13, 107:22): ՅԱՀՎԵԻ գործերի այս վերապատմումը՝

1. կրթում է հաջորդ սերնդին հավատարիմ հետևորդներ լինելու համար (տես՝ 2 Օրինաց 4:9, 10, 6:7, 20-25, 11:19, 31:13, 32:46):

2. ավետարանում է ազգերին (տես՝ 2 Օրինաց 4:6):

118:18 «ՏԵՐՆ ինձ շատ է խրատել» Սա ենթադրում է, որ Աստծո ժողովուրդը խորհրդապատկերում է այստեղ որպես անհատ, անցնելու է չափազանց դժվարին ժամանակներով իրենց մեղքի և անհավատարմության պատճառով: Այն նաև շեշտադրում է այն փաստը, որ Աստված վերահսկում է պատմությունը: Այս բաները պարզապես անիմաստ պատահարներ չեն, այլ ունեն պատմական նպատակ դեպի Աստծո վերջնական հաղթանակին շարժվելու հարցում: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

Անհատական և հավաքական առանձնահատկությունները կարելի է տեսնել՝

1. Սաղմ. 118:19,28-ում երկու ԵՉԱԿԻ ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ ԸՂՁԱԿԱՆ իմաստով կիրառության մեջ

2. Սաղմ. 118:24-ում երկու ՀՈԳՆԱԿԻ ԸՂՁԱԿԱՆՆԵՐԻ կիրառությամբ, նկատեք՝ *Hiphil* ՀԵԳՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ 118:29-ում

Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ «շատ խրատել» ԱՆՈՐՈՇ ԲԱՑԱՐՁԱԿ է և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅ է միևնույն արմատից (BDB 415, KB 418), որը մատնանշում է ուժգնություն (տես՝ միևնույն ձևը, սակայն տարբեր արմատով Սաղմ. 118:13-ում):

Աստված խրատում է Իր զավակներին (տես՝ 2 Օր.4:36, 8:5, 2 Թագ. 7:14, Հոր 5:17, 33:19, Սաղմ. 73:14, 94:12, 119:67,71,75, Առակ. 3:11-12, Երեմ. 31:18, 1 Կորնթ. 11:32, Եբր. 12:5-11, Հայտն.3:19):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 118:19-21

¹⁹Բացե՛ք իմ առաջ արդարության դարպասները,

որ նրանց մեջ մտնեմ ու ՏԻՐՈՋԸ գոհություն մատուցեմ .

²⁰ՏԻՐՈՋ դուռն է սա, և արդարներն այս դռնով են մտնելու:

²¹Փառաբանելու եմ Քեզ, որովհետև ինձ լսեցիր

Եվ իմ փրկությունը դարձար:

118:19 «Բացե՛ք իմ առաջ արդարության դարպասները» «Բացեք» (BDB 834, KB 986) *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սաղմոս 118:19-27 կարծես թե առաջարկում է երթ (հավանաբար ռազմական) Երուսաղեմ քաղաքից դուրս դեպի տաճարի ներսի տարածքը: Սաղմոս 118:19 նկատի չունի տաճարը, որը նշվում է հատկապես 118:26,27-ում, այլ Երուսաղեմի դարպասները:

118:20 «արդարներն այս դռնով են մտնելու» Սա անդրադարձ է երթով քաղաքի կամ տաճարի սուրբ տարածքները մտնելուն: Նկատե՛ք, արդարության գործոնը միայն ազգային կամ հավաքական չէ, այլ նաև անհատական (տես՝ Սաղմ. 15:1-2, 24:3-6, 26:6, 140:13, Եսայի 33:13-16):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

118:21 «Եվ իմ փրկությունը դարձար» Պետք է հիշել, որ «փրկություն» տերմինը (տես՝ Սաղմ. 118:14) ՀԿ-ում խոսում է ֆիզիկական ազատության մասին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆ)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 118:22-29

²²Այն քարը, որ կառուցողները մերժեցին,

Անկյունաքար դարձավ:

²³Սա **ՏԻՐՈՉԻՑ** եղավ և սքանչելի է մեր աչքերին:

²⁴Սա սա այն օրն է, որ **ՏԵՐՆ** ստեղծեց,

Պիտի ցնձանք և ուրախ լինենք նրա մեջ:

²⁵Հիմա փրկի՛ր, աղաչո՛ւմ եմ, ո՛վ **ՏԵՐ**.

Հիմա աղաչում եմ, ո՛վ **ՏԵՐ**,

Հաջողություն ուղարկի՛ր:

²⁶Օրհնյալ լինի նա, որ **ՏԻՐՈՉ** անունով է գալիս,

Օրհնեցինք քեզ ՏԻՐՈՉ Տնից:

²⁷Աստված **ՏԵՐ** է և լույս է ցույց տալիս մեզ .

Չոհր պարաններով կապեցե՛ք ու զոհասեղանի եղջյուրներին մոտեցրեք:

²⁸Դու իմ Աստվածն ես, ու պիտի փառաբանեմ քեզ:

Դու իմ Աստվածն ես, պիտի մեծարեմ քեզ:

²⁹Գոհություն մատուցե՛ք **ՏԻՐՈՉԸ**,

Քանի որ բարի է, քանի որ Նրա ողորմությունը հավիտյան է:

118:22 «Այն քարը, որ կառուցողները մերժեցին» Սա ակնհայտորեն կիրառվում է պարադոքսալ իմաստով: Այն կարծես թե այստեղ նկատի ունի ազգային մերժում: Սակայն մենք հասկանում ենք Քրիստոսի կյանքից, որ այն բացառապես և անհատապես իրականացավ Նրա մեջ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՆԿՅՈՒՆԱԶԱՐ

❖ «Անկյունաքար դարձավ» Սա անդրադառնում է Մեսիային (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԵՍԻԱ), կիրառվում է Եսայի 28:16-ում: Այն նաև խոսում է Մեսիայի մերժման և թվացյալ Աստծո նպատակի պարտության մասին (այսինքն՝ Գողգոթան):

118:23 «Սա **ՏԻՐՈՉԻՑ** եղավ և սքանչելի է մեր աչքերին» Աստծո ճանապարհները այնքան տարբեր են մեր ճանապարհներից (տես՝ Ես. 55:9-11): Ոչ ոք չէր ակնկալում, որ Մեսիան կլինի մարմնավորված Աստված: Ոչ ոք չէր ակնկալում Նրա փոխանորդական քավությունը (տես՝ Եսայի 53, Մարկոս 10:45, 2 Կորնթ. 5:21): Սակայն սա կանխորոշված Աստծո ծրագիրն էր (տես՝ Գործք 2:23, 3:18, 4:28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

118:24 «Սա այն օրն է, որ **ՏԵՐՆ** ստեղծեց. պիտի ցնձանք և ուրախ լինենք նրա մեջ» Աստված է վերահսկում պատմությունը (թե՛ հավաքական և թե՛ անհատական): Այն ինչ թվում է հոգևոր աղետ, հաճախ այն փոխակերպվում է հսկայական հոգևոր հաղթանակի:

Ես խորհուրդ եմ տալիս ընթերցեք Հաննա Ուիդիոլ Սմիթի *Երջանիկ կյանքի Քրիստոնեական գաղտնիքը*:

❖ «Օր» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՕՐ (yom):

118:25 «Ո՛վ ՏԵՐ, փրկիր» Սա «օվսաննա» տերմինն է, որը ասվում է Հիսուսի համար Երուսաղեմ հաղթական մուտքի ժամանակ Իր երկրավոր կյանքի վերջին շաբաթվա ընթացքում (տես՝ Մատթ. 21:42, 45): Ինչ էլ որ լինի այս Սաղմոսի բուն պատմական միջավայրը, այն կիրառվում էր առաջին դարի ռաբինական Հուդայականության մեջ որպես ողջույնի ծիսակատարություն այն ուխտագնաց՝ ների համար, ովքեր մտնում էին քաղաք ամենամյա տոնակատարությունների համար: Սակայն, երբ Հիսուսը հայտնվեց, նրանք վերցրեցին այն, ինչ ամենամյա ողջույնի ձև էր և շատ անձնական դարձրեցին հենց Նրա համար:

Այս համարը սկսում է երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ

1. փրկիր – BDB 446, KB 448, *Hiphil*

2. հաջողություն ուղարկիր – BDB 852 II, KB 1026, *Hiphil*

ՀԿ-յան աստվածաբանության մեջ (այսինքն՝ «երկու ճանապարհը», տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-29, 30:15, 19, Սաղմոս 1), Աստծո ներումը և ընդունելությունը ցուցադրվում են տեսանելի կերպով հաջողությամբ: Սակայն, սա միշտ չէր, որ ապացույցն էր դրա (տես՝ Հոբ, Սաղմոս 73):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՄՐԱՅԵԼԻ ՏՈՆԵՐԸ

118:26 «Օրհնյալ լինի Նա, որ ՏԻՐՈՋ անունով է գալիս» Այս արտահայտության կիրառությունը ՆԿ-ում Մեսիական առանձնահատկություն է տալիս այս Հալլեյ Սաղմոսին (տես՝ Մատթ. 21:9, 23:39, Մարկ. 11:9, Ղուկ. 13:35, 19:38, Հովհ. 12:13):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

118:27

NASB, NRSV, TEV, REB, JPSOA, LXX «ՏԵՐԸ Աստված է»

NKJV

«Աստված է ՏԵՐԸ»

Peshitta

«Ո՛վ ՏԵՐ, մեր Աստված»

NJB

«ՅԱՀՎԵՆ Աստված է»

ԲԱՅ չկա, միայն *Է7* (BDB 42) և *ՅԱՀՎԵ* (BDB 217): Այս նույն ձևը հանդիպում է Սաղմ. 85:9-ում: Միևնույն համադրությունը առանց ԲԱՅԻ նաև Սաղմ. 118:28-ում է՝ *Է7* (բառացի՝ «Իմ *Է7*») և *ԴԵՐԱՆՈՒՆ* (BDB 61):

Իսրայելի Աստվածը մի քանի անուններով է ներկայանում:

1. դրանցից մի քանիսը ձևավորվել են պատմության ընթացքում
2. մի քանի հեթանոս աստվածների տիտղոսներ էին, որոնք կիրառվում էին Իսրայելի Աստծո համար
3. մի քանիսը մատնանշում են Նրա էության տարբեր առանձնահատկություններ
4. մի քանիսը բանաստեղծական գուգահեռներ են գրական նպատակներով

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

❖ **«Նա լույս է ցույց տալիս մեզ»** Մի քանի մեկնություններ են եղել:

1. Աստծո անձնական ներկայությունը – Սաղմ. 89:15, 90:8
2. նկատի ունի *ՅԱՀՎԵԻ* երեսը՝ ժայտը (տես՝ Թվոց 6:25, Սաղմ. 4:6, 31:16, 67:1, 80:3,7,19, 119:135):
3. Աստծո հայտնությունը՝
ա. Սուրբ Գիրքը – Սաղմ. 19:8, 36:9, 119:105, Եսայի 51:4
բ. Մեսիան – Ես. 42:6, 49:4, 51:5, Միք. 7:8, Հովհ. 1:9, 3:19-21, 12:35-36, Գործք 13:47, 1 Հովհ. 2:8
4. Ելիցի *Շեխինա* ամպը – Ելից 13:21-22, 14:20 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԵՒԻՆԱ)
5. Աստծո շարժական կառք գահը – Եզեկ. 1:4,27
6. ֆիզիկական ազատության նկարագրություն (տես՝ Սաղմ. 37:6, 97:10-11):

❖ «**զոհը պարաններով կապեցե՛ք ու զոհասեղանի եղջյուրներին մոտեցրե՛ք**» Սա շատ դժվար երբայերեն արտահայտություն է և մի քանի տարբեր կերպերով են հասկացվել:

1. «ուխտավորներին իրար կապելը» - սա պարունակում էր տեքստի շտկում՝ հիմնված Մեռյալ Ծովի Գալարների վրա (UBS Տեքստային Նախագծից՝ էջ 406, հավանական առաջարկ):
2. «ձեռքերի մեջ ճյուղերով երթով վեր բարձրանալը» - Սա Երուսաղեմի Աստվածաշնչի (JB) և NIV թարգմանությունն է. այն կարծես թե անդրադառնում է ՀԿ-ի ակնարկին՝ Տաղավա-րահարաց տոնին օգտագործվող ճյուղերին (տես՝ Ղևտ.23:40): «Պարաններ» տերմինը կարող է կիրառվել ճյուղերի համար (տես՝ Եզեկ. 19:11, 31:3,10,14):
3. «զոհասեղանի եղջյուրներին մոտեցրե՛ք» - Սա կարծես թե լավագույնս է համապատաս-խանում համատեքստին, և «կապված» տերմինը կարելի է գտնել այս նշանակությամբ Դատ.15:13, 16:11, Եզեկ. 3:25-ում:
4. Չոհի գաղափարը կարծես թե կապված է Քրիստոսի փոխանորդական քավության հետ (այսինքն՝ Եսայի 52:13-53:12), որը ակնարկվում է Մագորեթիկ Տեքստում՝ Մաղ.2:3-ում: Չոհասեղանի եղջյուրները զոհասեղանի ամենասուրբ մասն էին, որոնց վրա ցողվում էր զոհի արյունը (տես՝ Ելից 27:2, 30:10, Ղևտ. 4:7,18,25,30,34, 8:15, 9:9,16:18):

118:28-29 Այս Մաղմոսը ավարտվում է այնպես, ինչպես սկսեց, զոհության տոնակատարությամբ (այսինքն՝ BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) Աստծուն այն բանի համար՝

1. թե ով է ԻՆՔը
2. թե ինչ է արել Նա
3. թե ինչ է պատրաստվում անել Իր հավատարիմ հետևորդների համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք բոլոր այն օրհնությունները, որոնք Աստված տվել է մեզ այս Մաղմոսում:
2. Ինչո՞ւ են շատ գիտնականներ կարծում, որ այս Մաղմոսը հակահնչյունային են:
3. Ինչպե՞ս է ազգը անձնավորված թագավորի մեջ և հետագայում Մեսիայի մեջ:
4. Բացատրե՛ք Մաղմ. 118:22 և 26-ի Մեսիական տարրերը, ինչպե՞ս են դրանք համապատաս-խանում հնագույն Իսրայելի հետ և Քրիստոսի կյանքի հետ:
5. Ո՞րն է Մաղմ. 118:27-ի նախընտրելի թարգմանությունը: Ի՞նչ կապ ունի դա Հիսուս Նազով-րեցու կյանքի և ծառայության հետ: